5.1 Սույն պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի համաձայնությամբ՝ բացառությամբ

ա) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանասական հատկացումների նվազեցման դեպքերի

բ) Եթե պայմանագրի գնի հիմնավորվածության և արժանահավատության փորձաքննության արդյունքում պայմանագրի գինը որակվում է շուկայական գնից 10% բարձր և պայմանագրի կողմը չի համաձայնում այդ չափով գնի նվազեցմանը,ապա Պատվիրատուն պայմանագիրը միակողմանիորեն լուծում է և չի կրում պայմանագրի լուծման հետևանքով առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը:

5.2 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության դեպքում՝ պայմանով,որ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը(ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից,եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով,որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը,ջրհեղեղը,հրդեհը,պատերազմը,ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը,քաղաքական հուզումները,գործադուլները,հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը,պետական մարմինների ակտերը և այլն,որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի,ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայամանագիրը՝այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1 Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մինչև 31.12.2018թ.-ը:

7.2 Սույն Պայմանագրով չնախատեսված հարցերը կարգավորվում են գործող օրենսդրությամբ:

7.3 Սույն Պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Կողմերին տրվում է մեկական օրինակ:

8. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց» ՊՓԲԸ«	« Դիետ » ՍՊԸ
Ք.Վանաձոր, Սևակի 51	Ք.Վանաձոր, Թումանյան 16
«Ակբա-կրեդիտ ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ի«Լոռի» մ/ճ	«Ինեկոբանկ» ՊՓԲԸ-ի Վանաձորի մ/ճ
Հ/Հ 220055140192000	ՀՀ 2050222000471001
ՀՎՀՀ 06912113	ՀՎՀՀ 06908685
Տնօրեն՝ _____ Ռ.Չիլինգարյան	Տնօրեն՝ _____ Ռ.Թոթոլյան
Կ. Տ.	Կ. Տ.